

ЖИЗНЬ ОБЩИНЫ

«Հայ ժողովրդի պատմությունը համընդհանուր փորձ է, կենդանի մնալու փորձ»: Նանսենի այս տեսակետին համակարծիք են աշխարհի ամենատարբեր փիլիսոփաներ, պատմաբաններ, և մարդիկ, ովքեր այս կամ այն կերպ ծանոթ են մեր պատմությանը: Չէ՛ որ դարեր շարունակ թշնամու գնդակը փորձել է խլացնել հայի գուլպա հորովելու ու խաղաղ օրոքոցայինը, բայց մենք կարողացել ենք պատվով հաղթահարել մեր ճանապարհի մարտահրավերները: Մակայն ինչպե՛ս չըմբոստանալ, ի վերջո ինչքա՛ն կարելի է մաքառել քո հողում ամուր կանգնելու համար: Երբ թվում է, թե վերքերը սպիանում են՝ նոր հարված ենք ստանում, ու նորից ամեն ինչ սկզբից... Ահավասիկ դարաբաղյան հակամարտության այս տարվա ապրիլյան սրունը:

Արցախը ես եմ

Թերևս ժամանակն է, որ իշխանությունները «հրադադարներով» սահմանափակվելու փոխարեն հաստատուն որոշումներ կայացնեն քաղաքական իրավիճակը բարելավելու համար: Իսկ մինչ կառավարությունը դա կաներ, հայ զինվորներն ու կամավորականները միասնական բազուկ դարձած կռվեցին սահմանում: Շատերը վիրավորվեցին, ոմանք զոհվեցին, իսկ նրանց մեջ կային այնպիսիք, ովքեր ընտանիքները հույժ ծանր կարիքի մեջ սպասում էին իրենց զինվորին: Արցախի լարված իրավիճակը ուղիղ հանդեպ է հայությանը: Հայաստանում և սփյուռքում իրագործվեցին բազմաթիվ բարեգործական ծրագրեր ի աջակցություն քառօրյա պատերազմում զոհված և վիրավորված զինվորների ընտանիքներին: Դոնի Ռոստովում գործող հայկական մշակութային խմբերին ևս համախմբեց այս գաղափարը: Իսկ մտահաղացման հեղինակը Ակսայ քաղաքի «Արարատ» խմբակի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Լուսինե Պետանյանն էր: Նա կարողացավ հայրենիքին թելուգ փոքր մասով օգտակար լինելու մտքով «վարակել» Դոնի Ռոստովում ապրող ու գործող ստեղծագործողների մեծ մասին, և մայիսի 31-ին «Роствертол ДК» դահլիճում կազմակերպվեց երաժշտապետուհի երեկո «Արցախը ես եմ» խորագրով: Նպատակը



Բարեգործական համերգի արդյունքում հավաքված 100 000 ՌԴ ռուբլին կփոխանցվի այս տարվա ապրիլին Արցախի Թալիշ գյուղի մարտում զոհված, Հայաստանի Զուլաքար գյուղի նախկին բնակիչ, պայմանագրային զինծառայող, ենթասպա Գագիկ Մելքոնյանի ընտանիքին: Իսկ նրա ըն-



որոնք ապահովեցին միջոցառման տեխնիկական մասը. Արման Մկրտչյան, Գևորգ Գրիգորյան, Հակոբ Բոդյան, Արմինե Սիրադեղյան, Սվետլանա Հովհաննիսյան, Գայանե Տերտերյան, Հռիփսիմե Վարդանյան, Աննա Ծատուրյան: Բարեգործական համերգային երեկոն իր ներկայությամբ հարգեց հայկական համայնքի գործադիր տնօրեն Սերգեյ Սայադովը: Արսեն Բալիրյանի «Բալիրյան ֆոտո» և Հայկ Բավեյանի «Բավեյանի ստուդիա» ստուդիաների անշահախնդիր ծառայությունների շնորհիվ հանդիսատեսն ու կազմակերպիչները դեռ բազմիցս հնարավորություն կունենան վերապրելու երեկոյի ընթացքում ունեցած հրձվանքի ու ավտանքի, հարգանքի, խոնարհման և անշուշտ հպարտության հույզերի տարափը:



մեկն էր. վաճառված տումսերից և միջոցառման ժամանակ ժողովրդի հանգանակությունից ստացված գումարը ուղարկել որևէ զոհված զինվորի ընտանիքին: «Իհարկե, սրանով ցավը չես մեղմի, բայց գոնե քեզ կզգաս նրա մի մասնիկը, կկիսես այն, որ չկքի այդ բեռի տակ...», - տիրությամբ, բայց մինևույն ժամանակ ամենայն պատասխանատվությամբ, նշեց Լուսինե Պետանյանը: Երեկոն օրհնեցին Մեծ Սալա գյուղի ս. Աստվածածին եկեղեցու քահանայ Տեր Անանիա Բարսեղյանը և Չալոթ գյուղի ս. Համբարձում եկեղեցու քահանայ Տեր Թադևոս Հայրապետյանը: 700-ից ավելի հանդիսատես պահանջող դահլիճը լեփլեցուն էր հայերով, և դա միանգամայն սպասելի էր. չէ՛ որ այդ օրերին հայրավելի քան երբևէ հայրենասիրական ոգով լցնող երգերի ու պարերի կարիք ուներ, ինչը երեկոյի ընթացքում ապահովեցին «Արվի», (գեղ. դեկ. Հրաչիկ Գևորգյան), «Հայաստանի փայլեր» (գեղ. դեկ. Արմինե Օհանյան), «Ուրարտու» (գեղ. դեկ. Լիլիթ Վարդանյան) հայկական ժողովրդական և ազգագրական պարերի համույթները, «Բարրավուդա» (գեղ. դեկ. Արմեն Երիցյան) պրոդյուսերական կենտրոնի պարային և դիտլի խմբերը: Երգչուհիներ Սեդա Խա-

Կա՛նք, պիտի լինեն՝ նք ու դեռ շատանա՛նք

չառյանի և Լուսրա Սահակյանի կատարմամբ հնչեցին տարբեր ժանրի հայկական երգեր: Այս ամենը համեմատելով հաղորդակար Իոսիֆ Պողոսովի և համերգի նախաձեռնող ու գեղարվեստական ղեկավար Լուսինե Պետանյանի ներդաշնակ խոսքով: Շատ ոգևորիչ էր ամուսիններ ՌԴ ժողովրդական արտիստներ, Դոնի Ռոստովի ֆիլիարմոնիայի մեծ բեմի խոսքի վարպետներ Յուրի Պոնոմորյովի և Լիլիա Նիկոլայկայայի, ինչպես նաև կոնսերվատորիայի շրջանավարտ Տաթևիկ Գևորգյանի համեզին մասնակցելու ցանկությունը: Իսկ մեծարգո Շողիկ Միմավոնյանի «Հարություն առ...» բանաստեղծությունը, որն, ի դեպ, հեղինակը գրել էր ապրիլյան դաժան քառօրյա պատերազմից ազդված միջոցառումից մի քանի օր առաջ, հուզեց բոլորին: Աննա Բեգլայանն էլ իր «Ղարաբաղի հորովելով» կարծես ավելի ամրապնդեց միջոցառման արցախյան ոգին: Հարկ էմ համարում նշել նաև այն անհատների անունները,



տանիքը՝ ծանր կարիքի մեջ հայտնված 27-ամյա հիվանդ եղբայրն ու 19-ամյա քույրն են: «Գագիկը մարտական ընկերներին փրկելու համար իր վրա էր վերցրել թշնամու հարվածները: Ու եթե այս մարտիկը հանուն հայրենիքի կարող է առանց վարանելու հրաժարվել իր կյանքից, ուրեմն մեզնից յուրաքանչյուրն էլ բացի հպարտանալուց Գագիկի նման քաջերով, պարտավոր է ինչ-որ չափով սատարել նրանց ընտանիքներին: Մենք դա արեցինք հիմնվելով հայկական երաժշտարվեստի մոզական ուժի վրա», - մեր զրույցում նշեց Լուսինե Պետանյանը: Գուցե թե այսպիսի միջոցառումները հուշեն հայ մեծահարուստներին իրենց մեկ օրվա հաճույքի գումարը ծառայեցնել հայ արվեստին, ինչն ավելի բարձր ու տպավորիչ է խոսում հայրենասիրության մասին, քան իրենց «պերճախոս» բաժակաճառերը: Իսկ մինչ այդ ազգիս հիշեցնել, որ արյունոտ ապրիլներին մեզ միշտ էլ հաջորդել են հաղթանակի մայիսները... Էս մի ապրիլին կենաց ու մահու պայքար ենք մղել, Էս մի ապրիլին նոր Մոնթեներ ու նոր Վարդաններ ենք տեսել: Ու էական չի վաղն ինչ կյանի, Անգամ ոտիսը, էթե դավ կյուրթի, Անգամ աշխարհը դարեր շարունակ սեփական շահից աչքերը փակի, Մի բան հաստատ է Աստված է տերը այս ժողովրդի, Այս ժողովուրդն է տերը իր հողի ու հայրենիքի: Ու վստահ եմ ես տողերին այն գրված, թե Կա՛նք, պիտի լինեն՝ նք ու դեռ շատանա՛նք, Իրա վ էլ ասված: Լիլիթ Վարդանյան «Ուրարտու» պարային համույթի գեղարվեստական ղեկավար